ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Կոտայքի մարզ, Ակունք համայնք, Հատիս գյուղ

05 ապրիլի 2024թ.

Ս/թ. ապրիլի 05-ին, ժամը 14:30, ՀՀ Կոտայքի մարզի Ակունք համայնքի Հատիս գյուղի վարչական շենքում «ՆԵՅՉՐԼ ԹՐԵԺՐՍ» ՍՊԸ-ի կողմից նախաձեռնած, ՀՀ Կոտայքի մարզի Հատիսի բազալտի տեղամասում 2024-2027թթ. կատարվելիք երկրաբանահետախուզական աշխատանքների նախնական գնահատման վերաբերյալ հանրային 1-ին քննարկումներ:

Մասնակցեցին՝

«ՆԵՅՉՐԼ ԹՐԵԺՐՍ» ՍՊ ընկերության տնօրեն՝ Ա. Ասոյանը, «ԷԿՈ ՄԵՆԵՋՄԵՆԹ» ՍՊԸ-ի տնօրեն՝ Տ. Նավասարդյանը, Ակունք համայնքի Հատիս գյուղի վարչական ղեկավար՝ Ս. Գարսևանյանը, Համայնքի ղեկավարի օգնական՝ Մ. Սարիբեկյանը, համայնքապետարանի աշխատակիցները և համայնքի բնակիչները:

Կից ներկայացվում է մասնակիցների ցանկը:

Զեկուցումներ՝

Հատիս գյուղի վարչական ղեկավար՝ Ս. Գարսևանյանը բացեց քննարկումը և խոսքը փոխանցեց Տ. Նավասարդյանին:

Տ. Նավասարդյան – Բարև Ձեզ հարգելի ներկաներ:

Ես «ԷԿՈ ՄԵՆԵՋՄԵՆԹ» ընկերության տնօրենն եմ: Մեր ընկերությունը իրականացնում է նախատեսվող գործունեության երկրաբնապահպանական մասի համակարգումը: Մեզ հետ այստեղ նստած է Անին, ով հանդիսանում է նախատեսվող

ՀՀ, Երևան, Ռոստովյան 9
հեռ: +374 10 432 313
E-mail; naturaltreasures.arm@gmail.com

գործունեության նախատեսվող կազմակերպության տնօրենը: Ցանկանում ենք տեղեկացնել, որ նախատեսվում է Կոտայքի մարզի Հատիսի բազալտի տեղամասում 2024-2027թթ. կատարվելու է երկրաբանահետախուզական աշխատանքների բնապահպանական փորձաքննություն իրականացնել: Որոշ տեղեկատվություն տրամադրեմ, թե դա ինչ է իրենից ներկայացնում: Նախատեսվող գործունեությունը համարվում է ըստ ՀՀ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին օրենքի գ կատեգորիայի փորձաքննության ենթակա գործունեություն: Ինչն իրենից ենթադրում է, որ համաձայն գործող օրենքի մեկ հանրային լսումով, բայց տարբերակ կա, որ երկու հանրային լսումով փորձաքննություն կիրականացվի: Փորձաքննության ընթացքում իրականավելու է տարածքի երկրաբանական, բնապահպանական, հնագիտական, կենսաբազմազանության բոլոր արժեքների առկա տվյալները: Վերլուծվելու է, որ նախատեսվող գործունեությունը որևէ ազդեցություն չունենա այդ ամենի վրա: Աշխատանքներն իրականացվելու են այնպես, որ համայնքի, նախատեսվող այլ շահառուներին որևէ ազդեցություն չլինի: Ի՞նչ է իրենից ներկայացնում գործունեությունը: Գործունեությունը ներկայացնում է երկրաբանական ուսումնասիրություն որն ունի երկու տարբեր մեթոդ: Շուրֆային և մեթոդով իրականացվելու է կողային նմանուշարկման մեթոդով, իրականացվում է տարածքում պաշարի հաշվեկշռի բացահայտումը: Պարզվելու է տվյալ տարածքում բազալտի հաշվեկշիռը ինչքանա, որից հետո այս փորձաքննության նպատակը այդքանն է: Իրականացվելու են երնակումներ: Իրականացվելու է նմուշառում, որպեսզի պարզվի առկա բազալտի ֆիզմեխի քիմիական հատկությունները, որը ամփոփ տեղեկատվություն է տալու տվյալ տարածքում առկա բազալտի պաշարների մասին: Հորատման աշխատանքները կազմակերպվելու են այնպես, որ բացված հորատհրապարակները, որտեղ կան հողի վերին շերտ, հողի վերին շերտը առանձնացվելու է, տեխնիկան հորատում է իրականացնելու, և դրանից հետո հողի ելից կիրականացվի: Այսինքն, նախատեսվում է, որ աշխատանքներից հետո, շուրջ մեկ ցիկլիկ սեզոնից հետո, որևէ ազդեցություն չի նկատվի: Կարևորա նաև նշել, որ համայնքի հետ համագործակցումը և սոցիալական նկրտումների իրականացումը իրականացվելու է համայնքի բոլոր շահառուների և ղեկավարի հետ համատեղ: Այսինքն, այստեղ չկան տարբերակներ, որ գանք կանենք, հետո կերնա: Մշակվելու են հստակ

ՀՀ, Երևան, Ռոստոմյան 9
հեռ: +374 10 432 313
E-mail; naturaltreasures.arm@gmail.com

մեխանիզմեր, ինչ է լինելու, ոնց է լինելու, համայնքը, այսպես ասած, ինչ շահառու է հանդիսանալու: Հորատման հստակ քանակը պարզ կլինի երբ որ հողի մշակումները կիրականացնեն: Կպարզվեն բոլոր այն թիրախային կետերը որտեղ արդեն անհրաժեշտ կլինի հորատվել:

Հիմա նախնական փուլն է, որտեղ համայնքին ծանուցվում է թե ինչ ենք նախատեսում անել և ծրագրի պատրաստ լինելուն պես, ամփոփելով այս հանրային լսումը, մուտքա արվելու լիազոր մարմին օրենքով սահմանված կարգով փորձաքննության գործընթացը սկսելու համար:

Մասնակից – Իսկ թիրախային կետերը ու՞մ են ներկայացվելու: Թե՞ գաղտնիա պահվելու:

Տ. Նավասարդյան – Ոչմի բան, ի սկզբանե գաղտնի չի պահվելու: Քննարկենք, որոշենք, որ ոչմի բան գաղտնի չի պահվելու, բայց կա սենց տարբեր շահառուներ, օրինակ՝ համայնքի հետ համագործակցությունը և սոցիալական ներդրման փաթեթը քննարկվումա համայնքի հետ: Այսինքն, համայնքի բոլոր շահառուների հետ: Ձեզ հետաքրքիրա, ձեզ: Պողոսին հետաքրքիրա, Պողոսին: Համաձայնագրով, որպես փաստաթղթերին կից ուղարկվումա լիազոր մարմին: Լիազոր մարմինը իմանումա, որ ստեղ, էտ մասով ամեն ինչ նորմալա:

Մասնակից – Քանի մետր խորությամբա աշխատանքները լինելու:

Տ. Նավասարդյան – Էս պահին չեմ կարող ասել, որովհետև առկա են միայն սովետական ուսումնասիրության տվյալներ, որոնք բավարար չեն վերլուծելու հորատման ուղղությունները: Հողի նմուշառումները ցույց կտան ցանց կազմել երկրաբանական, և ըստ դրա որոշել քանի մետր խորությունա:

Մասնակից – Հիմնական նպատակը բազա՞լտն է:

ՀՀ, Երևան, Ռոստովյան 9
հեռ: +374 10 432 313
E-mail; naturaltreasures.arm@gmail.com

Տ. Նավասարդյան – Ուրիշ այլ նպատակ պարզապես լինել չի կարող: Այլ նպատակ լինելու համար, Ձեզ պարզ ասեմ, անմտություն կլինի բազալտով մտնել, որովհետև ընկերությունը փողա ծախսելու, պարզելու է, որ բազալտ չկա, ենթադրենք տուֆ, բայց չի կարողանալու որևիցե բան անել որովհետև այդ ուղղությամբ աշխատանքներ չի տարել: Անմտությունա, միայն բազալտնա:

Մասնակից – Բազալտի մշակումը շատ ծախսատարա և դժվար:

Տ. Նավասարդյան – Դրա համար պաշարի գնահատում են անում: Պաշարի գնահատում իրենից ինչա ներկայացնում: Ձեր համար դա կարա մի քիչ խորթ թվա, դուք գիտեք որտեղ բազալտ կա էս համայնքում:

Մասնակից – Երևումա արդեն:

Տ. Նավասարդյան – Բայց երբա դա համարվում պաշար: Երբ որ հորատական և ֆիզիկամեխանիկական հատկությունները թույլ են տալիս մշակելուց հետո իրեն են գնով վաճառել, որը եկամուտ կբերի, այ էդ դեպքում համարվումա պաշար: Այդ հաշվարկները պետք է արվի: Նախաձեռնողը կարա էնքան եկամուտ ստանա, որ իր արած ծախսերը կարողանա փակել: Այս դեպքումա համարվում պաշար: Թե չէ բազալտ միանշանակ կա: Ի՞նչ որակի, ի՞նչ ծավալի:

Մասնակից 2 – Մի հատ հարցա մեր համար կարևոր, որ էստեղ 140 հա տարածք սեփական տարածքներ են լինում: 140 հա տարածք կա՞ որ:

Ս. Գարսևանյան – Էդ հողերը վարձակալության են տված: Ո՞նց է լինելու:

Տ. Նավասարդյան – Եթե մենք ստացանք դրական բոլոր եզրակացությունները, կարգավորվելու է համայնքային հողային ռեսուրսները: Այսինքն, հիմա էդ հողերը ձեռք բերելու իմաստ չունի: Մենք էնպիսի գործունեություն չենք անում, որ հողերին վնաս տա: Բայց եթե պաշար հաստատվեց, գալու են հողատիրոջ հետ, սեփականատերա կամ

ՀՀ, Երևան, Ռոստովյան 9
հեռ: +374 10 432 313
E-mail; naturaltreasures.arm@gmail.com

համայնքային հողա, ըստ նպատակային նշանակության տեսնենլու ենք, թե ումա պատկանում հողը, գանք պայմանագիր կնքնենք, վարձակալություն վերցնենք, ուսումնասիրությունն անենք, առանց վնասելու, պաշարը հաստատենք: Հետո եթե կգա այլ փուլ, որ կհաստատվի պաշարը և կարիք կլինի հողի ձեռքբերումը, արդեն կքննարկենք հողային հարաբերությունները ոնց են լինում: Դա կարգավորվումա ՀՀ-ում հողային օրենսգրքի համաձայն:

Մասնակից 3 – Ես մի հարց ունեմ: 2,5կմ գյուղից հյուսիս: Մենք 140 հա կարողա չունենանք էլ տարածք: Էս կողմը որ ընկնի, սեփականաշնորհված հողեր են:

Մասնակից 4 – Հողերի մեծ մասը պետական հողեր են: Կադաստրով հանել ենք:

Մասնակից 2 – Իսկ կարող է էնպես լինի, որ ուսումնասիրությունը որ անեք ընկնի մարդկանց սեփական տարածքի մեջ:

Մասնակից 4 – Ուսումնասիրությունը կարող ենք անել, երբ-որ մարդկանց հետ սերվիտուտի կամ վարձակալության պայմանագիր կապենք: Նույնը, եթե պետական հողեր է, մարզպետարանի հետ է վարձակալությունը արվելու, եթե համայնքայինա՝ համայնքի, եթե մասնավոր է՝ մասնավոր: Առանց այդ վարձակալության պայմանագրի մենք ոչմիբան չենք կարող անել:

Տ. Նավասարդյան – Պրակտիկայում էսպիսի դեպք կա: Իրականում թույլտվությունը տալիսա պետությունը: Էս հարաբերությունը կանոնակարգվումա պետության հետ: Օրինակ՝ իմ պրակտիկայում եղելա դեպք, երբ-որ մի հատ փոքր հողակտորը մարդը թույլ չի տվել, ասելա չէ, բացառվածա, թույլ չեմ տալիս: Իհարկե, եթե դա լինի մեկ նախադեպ, երկու երեք նախադեպ, արդեն լիազոր մարմինը պետքա անհանգստանա, որովհետև թույլ չի տալիս իր պաշարը գնահատեն: Բայց եթե մեկ երկու դեպքա, կարող ես նույնիսկ հորատման հրապարակը փոխես, որովհետև էնպես չի որ գնալու են ամբողջությամբ հողի վերին շերտը հանեն: Մի քանի տոչկա պետքա նմուշ վերցնենք: Մի քանի տոչկում մի քանի մետր

ՀՀ, Երևան, Ռոստովյան 9
հեռ: +374 10 432 313
E-mail; naturaltreasures.arm@gmail.com

շուրֆ անել ու հորատել, ու վերջ: Այսինքն, կարող է հող լինի, ձեր հողը էտ մի սահմանով ոչմի բան չարվի բացարձակ:

Մասնակից 2 – Խնդիրն էնա, որ կարողա հանկարծ քիմիական տարրեր լինեն, որ…

Տ. Նավասարդյան – Խնդրում եմ, եկեք մոռանանք էլի: Էն միֆերի հետևից չգնանք, որ հանքա, ուրեմն քիմիական նյութա: Բազալտը հենց էսօր ձեր մոտա: Ձեր այգիների պարիսպին դրածա: Եկեք նույնիսկ չխոսանք:

Մմոռացեք քիմիական աղտոտման մասին: Էստեղ, ես Ձեզ ոչ թե ասեմ, որ ուսումնասիրելու ենք ձեզ ապացուցենք, դա չի էլ ուսումնասիրվելու, որովհետև բազալտա՝ հրաբխածին ապարներ են, հրաբխի լավայա: Տարբեր ծերտերում, տարբեր երկրաբանական փուլերում սառած: Էստեղ քիմիական որևէ բան չկա: Մենք հեսա էստեղից գնալու ենք, դուք գնաք բահով, կամ չգիտեմ, մի բան էլ վերցնեք ման գաք բազալտը:

Սենյակում ներկաները քննարկում են ծավալում:

Մասնակից – Օրինակ՝ մեր տների մեծ մասը էսլեռան վրայի բազալտը կտրել բերել են, որի մյուս կողմն էլ Կապուտանը ուներ հանք: Ես չգիտեմ իրենց պաշարները:

Տ. Նավասարդյան – Երկրաբանության մեջ պատահական չի լինում: Լինումա, որ տվյալը չի ճշգրտվում: Օրինակ՝ սովետի ժամանակ, մտնում ես երկրաբանական ֆոնդ, դա բոլորինա ասում, պարզում ես թե ինչ ուսումնասիրություններ են արվել, որտեղ են արվել: Տեսնում ես ու դու որպես երկրաբան ուզում ես հասկանաս դա արժանահավատա թե չէ, որովհետև հետաքրքիր ուսումնասիրություններ կան: Նայում ես, տեսնում, որ ամեն շաբաթ գառա մորթել ու զգում ես, որ դրա արժանահավատությունը էտքան էլ լավը չի էլի: Նայում ես ատչոտը, ասում ես լավ ես գնամ հորատեմ, փողս կդնեմ իմ գրպանը, կփորձեմ պաշար հաստատել: Ուզում եմ ասել, որ էդ պաշարը էս ընկերությանը չի: Պաշարը հաստատվումա

ՀՀ, Երևան, Ռոստովյան 9
հեռ: +374 10 432 313
E-mail; naturaltreasures.arm@gmail.com

ու դառմնումա պետության ռեզերվ: Մի հատ էլ պետքա գնաս պետությանն ասես, գիտես ինչ կա, կտա՞ս շահագործեմ, նոր պայմանագիր կնքես, նոր նախագիծ, նոր էս ամբողջ փուլը:

Մասնակից – Իսկ էդ ուռումնասիրության հետ Գոգոն կապ չունի՞:

Տ. Նավասարդյան – Էնքան, որքանով որ դուք ցանկացածդ, ՀՀ քաղաքացիա ինքը: Բացարձակ, որևէ:

Մասնակից – Ինքը ՀՀ հավասար քաղաքացիա՝ մենք սովորական:

Տ. Նավասարդյան – Չէ, բացարձակ, որևէ բան:

Դե ցանկացած հարց: Որևէ, նույնիսկ ոնց ասեմ: Չեմ կարա քննարկեմ, որովհետև բացարձակ կապ չունի:

Հումորով քննարկում են ծավալում:

Մասնակից – Մեկա մենք ձեզ չենք հավատում:

Տ. Նավասարդյան – Բայց շատ հետաքրքիր է: Նենց խոսում եք, որ ձեզ հավատամ, բայց դուք ինձ չէ: Խի՞:

Ձեզ թվում է պետք է գան խափեն գնան:

Մասնակից – Չէ, չէ:

Տ. Նավասարդյան – Ժողովուրդ ջան, սա իրականում շատ պարզ բանա: 21-րդ դարնա: Ամեն ինչ վերահսկվումա: Ես չեմ խոսում պետության մասին, որ փողեր ստանամ էլի: Բայց էսօր մարդ ամեն ինչ էլ կարա հասկանա, ամեն ինչ կարա ճշտի: Հիմա 2000 թիվը չի, որ գանք ձեզ խաբենք գնանք: Ցանկացած մարդ կարա նստի ու ճշտի:

ՀՀ, Երևան, Ռոստովյան 9
հեռ: +374 10 432 313
E-mail; naturaltreasures.arm@gmail.com

Մասնակից – 2000 թվին խաբել եք:

Տ. Նավասարդյան – Հա, ես կարողա խաբած լինեմ, մանավանդ որ 10 տարեկան էի:

Մասնակից – Կարմիրներն եկան ասեցին, էս ձորի մեջնա ջուրը, կանաչներն եկան ասեցին էն մի ձորի մեջնա, սրանք եկան ասեցին ոչ էնտեղ ջուր կա, ոչ էլ էնտեղ:

Տ. Նավասարդյան – Ոնց ֆռացիք ոչմի տեղ ջուր չկա:

Մասնակից – Հա, ջուր չունենք:

Տ. Նավասարդյան – Ժողովուրդ ջան, թեման սայա իրականում: Գալու ենք մի հատ էլ ձեզ ներկայացնենք, երբ որ հաշվետվությունն արված լինի, ուսումնասիրության էդ կոնցեպտը հստակ նախագիծ լինի: Կետ առ կետ ներկայացնելու ենք՝ քանի հորատանցք, ինչ խորությամբ, ձեր հարցին, նոր դրանից հետո նախարարությունը թույլ տա:

Ուզում եմ ասել, որ մի հատ էլ էս շրջանում հանդիպելու ենք: Նախարարությունը թույլ տա, տա եզրակացություն, սկսվելույա դաշտային աշխատանքները:

Ս. Գարսևանյան – Կթողնեն:

Տ. Նավասարդյան – Չէ, մեկ մեկ, հենց…

Չէ, ճիշտա, կթողնեն:

Դե, եթե էլ հարցեր չկան, կարող ենք ամփոփել:

Մ. Սարիբեկյան – Համաձա՞յն եք, որ մեր ընկերոջ ներկայացրած փաստարկները, հիմնավորումները լրիվ…

ՀՀ, Երևան, Ռոստովյան 9
հեռ: +374 10 432 313
E-mail; naturaltreasures.arm@gmail.com

Ս. Գարսևանյան – Գեոդեզիական քարտեզ կա մի հատ, բացեցինք տոչկեն 10կմ է տալիս հեռավորությունը:

Սենյակում ներկաները քննարկում են ծավալում:

Մասնակից 2 – Այ մարդ, մենք համաձայն ենք, որ նավթ էլ գտնեք:

Տ. Նավասարդյան – Մենք համ ման չենք գալիս, համ էլ չունենք:

Կազմակերպիչները եզրափակեցին քննարկումները, շնորհակալություն հայտնեցին համայնքի բնակիչներին և մասնակիցներին քննարկումներին ներկա գտնվելու համար:

Սույն արձանագրությունը կազմվել է երեք օրինակից, որից մեկ օրինակ տրամադրվել է հանրային քննարկումների վարող և պատասխանատու կողմին՝ Ակունք համայնքին, և մեկ օրինակ տրվել է հանրային քննարկումների ձեռնարկող՝ «ՆԵՅՉՐԼ ԹՐԵԺՐՍ» ՍՊ ընկերությանը, և մեկ օրինակ լիազոր մարմնին:

ՀՀ, Երևան, Ռոստովյան 9
հեռ: +374 10 432 313
E-mail; naturaltreasures.arm@gmail.com

«ՆԵՅՉՐԼ ԹՐԵԺՐՍ» ՍՊԸ

Հանրային քննարկումների
վարող և պատասխանատու
Հատիս գյուղի վարչական ղեկավար՝ Ս. Գարսևանյան

Հանրային քննարկումների ձեռնարկող՝
«ՆԵՅՉՐԼ ԹՐԵԺՐՍ» ՍՊԸ
Տնօրեն՝ Ա. Ասոյան

«ՆԵՅՉՐԼ ԹՐԵԺՐՍ»
«NATURAL TREASURES»
«НЕЙЧРЛ ТРЕЖРС»
00514127

Ակունք համայնքի
ղեկավարի օգնական՝ Մ. Սարիբեկյան

«ԷԿՈ ՄԵՆԵՋՄԵՆԹ» ՍՊԸ
Տնօրեն՝ Տ. Նավասարդյան

Հանրային քննարկումների արձանագրող՝ Ա. Սոսյան

ՀՀ, Երևան, Ռոստովյան 9
հեռ: +374 10 432 313
E-mail; naturaltreasures.arm@gmail.com